ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Կ. Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. Էրեբունի—Երևանի հիմնադրման 2750-ամյակի առթիվ, Երևան, 1968

Երևանի հիմնադրման 2750-ամյակի առթիվ, 1968 թ. լույս տեսավ ճարտարապետ Կ. Լ. Հովհաննիսյանի դրքույկը «Էրեբունի»[1] վերտառությամբ, հայերեն և ռուսերեն լեզուներով։ Հորելյանական այս հրատարակությունը (հիմնականում նկատի ունենք հայերեն օրինակը) կատարված է խնամքով, լավորակ թղթի վրա, նկարներով հարուստ. հրատարակչական աշխատանքը դնահատվեց ըստ արժանվույն. գիրքը նվաճեց մրցանակ (ձևավորել է Ն. Խանդադյանը)։

Գրքի հեղինակը փորձել է Արին-բերդի պեղման ու պեղածո նյութերի ուսումնասիրությունների արդյունքը շարադրել համեմատաբար մատչելի ձևով։

Ուրարտուի ճարտարապետության հարցերով Կ. Լ. Հովհաննիսյանը զբաղվել է դեռևս Թեյշեբաինի միջնաբերդի առնչությամբ, որպես Կարմիր-բլուրի հնագիտական արշավախմբի ճարտարապետ։

1950 թ. պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկու դլխավորությամբ նա ձեռնամուխ եղավ նաև Արին-բերդի հետազոտական աշխատանքներին, որի ընթացքում ձեռք բերած արժեքավոր նյութերը հիմք ծառայեցին այնտեղ նախաձեռնելու պարբերական պեղումներ։

Այս ամբողջ ընթացքում Կ. Լ. Հովհաննիսյանը Ուրարտուի ճարտարապետության բնագավառում հասել է հետաքրքիր եզրակացությունների։

Հետաքրքրական են Կ. Հովհաննիսյանի վերակազմությունները, ինչպես Թեյշեբաինիի միջնաբերդի կամ նրա առանձին կառույցների (հյուսիսային միջանցքի, № 28 մառանի, միջնաբերդի և այլ)[2], այնպես էլ Արին-բերդի կառույցների (Խալդիի տաճարի, ապադանի, հրո փոքր տաճարի և այլ)[3], որոնք, եթե որոշ թերացումներ էլ ունենան, այնուհանդերձ հիմքում ճիշտ պետք է լինեն։

Ըստ Կ. Հովհաննիսյանի կարևոր դիտողության, Ուրարտուի ճարտարապետությունը առաջնորդվել է որոշակի մոդուլներով. այսպես, օրինակ, շինարվեստում դործել է 5×8-ի փոխհարաբերությունը, որը պարզորոշ նկատելի է պալատական տաճարի (սուսիի) և այլ կառույցների չափերի մեջ։

Երբ արդեն հայտնի դարձավ Արին-բերդի 2-րդ շերտի ժամանակը և պարզվեց, որ Խալդիի տաճարի վերակառուցումը աքեմենյան ժամանակաշրջանի մշակույթի արդասիք է[4], Կ. Հովհաննիսյանը բացահայտեց նաև, որ պալատական շենքի վերակառուցումը փոխակերպել է այն հրո տաճարի (ատրուշանի), իսկ պալատական շենքի հարավ-արևելյան արտաքին պարսպին կից փոքր չափերի աղյուսաշեն կառույցը նույնպես հրո տաճար է, որի պատերի աղյուսաշարն այլ տարբեր է ուրարտական շարվածքից։

Կ. Հովհաննիսյանը մասնահատուկ ուշադրության արժանացրեց ուրարտացիների որմնանկարչական արվեստը, որը կազմել է Ուրարտուի և առհասարակ հին արևելյան ճարտարապետության բաղկացուցիչ մասը։

---

[1] Էրեբունի բերդ-քաղաքի տեղը հայտնի դարձավ հենց 1950 թ., երբ Արին-բերդում հայտնաբերվեց Էրեբունի-Երևանի հիմնադրումը նշող առաջին արձանագրությունը։

[2] К. Л. Оганесян, Архитектура Тейшебаини. Кармир-блур, IV, 1955, նկար № 22, 28, 39։

[3] К. Л. Оганесян. Архитектура Эребуни, Арин-берд, 1, 1961, նկար № 27, 45, 53. նաև Էրեբունի..., 1968։

[4] Մ. Ա. Իսրայելյան, Արծաթե երկու դրամ Արին-բերդից. «Սովետական Հայաստան», 1957, № 9, էջ 16։ Գ. Ա. Տիրացյան, 1) Երվանդունիները Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 6, էջ 62—63։ 2) Արին-բերդի սյունազարդ դահլիճը և սատրապային կենտրոնների հարցը Հայկական լեռնաշխարհում. նույն տեղում, 1960, № 7—8, էջ 99—114։ К. Л. Оганесян. Архитектура Эребуни, 1961, էջ 88—102։

Կ. Հովհաննիսյանը պարզել է նաև կառույցների վարպետության տարբեր մանրուքներ, ծածկերի, հատակների, պատերի կազմությունը և այլն։ Այս ամենը իր պատշաճ տեղն է գրավել դրախոսվող աշխատության մեջ։

Անշուշտ ո՞չ բոլոր դիտողությունները կարելի է վերջնականապես ավարտուն համարել։ Այսպես, օրինակ, Կ. Հովհաննիսյանը գրում է, որ միջնաբերդի պարսպի տակ, պաշտպանվելու համար եղել են սալարկներ[5], բայց այդ սալարկները, ինչպես ակնհայտորեն երևում է էրեբունիի միջնաբերդի վերակառուցումից, Կ. Հովհաննիսյանը պատկերացնում է պարիսպների արտաքին կողմում, որը տրամաբանական չէ և նպաստելու էր դրսից հարձակվողին, և ո՞չ թե ներսից պաշտպանվողին. կամ՝ Կ. Հովհաննիսյանը ենթադրում է, թե սյան վիթխարի խարիսխներ պարունակող շենքը (Ե, «տուն» գաղափարադիրը կրող) լրացուցիչ կառույց է[6]։ Դուցե դրա համար կա՞ն հիմքեր, բայց ներկայացված վիճակում այս եզրակացությունը համոզիչ չի հնչում։ Մենք նկատի ունենալով արձանագրական նյութը (վերջին տարիներում բացված այդ կառույցի պեղման ո՞չ բոլոր տվյալներն են մեզ հայտնի), դտնում ենք, որ Ե-ն լրացուցիչ կառույց չի կարող լինել. այն կազմել է յուրաքանչյուր բերդ-քաղաքի (մասնավորապես միջնաբերդի) անհրաժեշտ բաղկացուցիչ մասը, ըստ երևույթին, աշխարհիկ բովանդակությամբ, ինչպես կարելի է ենթադրել այնտեղ հայտնաբերված որմնանկարներից[7]. սա, իհարկե, ասված է պայմանական առումով, քանի որ Հին Արևելքում ամեն մի հասարակական բնույթի աշխարհիկ երևույթ կրել է իր վրա կրոնական դրոշմ։

Որ Ե-ն լրացուցիչ կառույց չէ, հիմնավորվում է հենց այն կարևոր հանգամանքով, որ այդ շենքն էլ, բերդի մյուս համահավաք կառույցների հետ միասին, հիմնադրել է նույն Արգիշթի Ա-ը։

Կարծում ենք, ճիշտ չէ նաև պալատական դահլիճի որմնանկարների վերակազմությունը։ Ըստ Կ. Հովհաննիսյանի՝ լայն գոտենախշում «մեջընդմեջ առյուծներ են ու ծնկաչոք ցուլեր»։ Բայց այդ նույն դահլիճում մեր պեղումների ժամանակ դտնվել են և ձիու պատկերի բեկորներ (նույնպես լայն գոտու պատկանող). պարզ չէ, թե որտե՞ղ է տեղադրում ձին Կ. Հովհաննիսյանը։ Մենք համոզված ենք, որ առյուծն ու ցուլը (նաև ձին), որպես առանձին իմաստի խորհրդանիշեր, միևնույն զարդագոտում չէին կարող զետեղվել, այլ նրանցից յուրաքանչյուրը պետք է կազմեր անջատ գոտենախշ (թեմատիկ երեք գոտի), ինչպես այդ պարզ երևում է նաև Ալթըն-թեփեում հայտնաբերած մի որմնանկարի վերակազմությունից[9]։

Ինչպես պետք է ենթադրել պեղման արդյունքներից, սուսիի (պալատական տաճարի) ներսում զոհաբերություններ չեն կատարվել, և ծածկը կարող էր «երդիկ» ունենալ լույսի ներթափանցման, բայց ոչ ծուխը քաշելու համար[10]։

Բանն այն է, որ պալատական տաճարի ներսում ո՞չ մոխիր է հայտնաբերվել, ո՞չ որևէ ասանի կտոր, ո՞չ էլ կենդանական ոսկրի բեկոր. այնտեղ նվիրաբերվել են մեծ մասամբ և ուրարտական ժամանակից առ վաղ հայկականը, մետաղե և այլ թանկարժեք իրեր (բրոնզե օղակներ, նետասլաքներ, նիզակի ծայրեր, ուլունքներ և այլն)։

Այս բոլորով հանդերձ՝ ճարտարապետական հարցերի լուծումը մենք չենք կարող թերագնահատել. թեև անցյալի մշակույթը դեռ շատ ծալքեր ունի, որոնք մեզ հայտնի չեն և պարզելու համար շատ ջանքեր ու նոր տվյալներ են պետք, բայց և այնպես Ուրարտուի ճարտարապետության բնագավառում առայսօր կատարվածը արժանի է ուշադրության և գնահատանքի։

Քննարկվող գրքում ճարտարապետական հարցերից դուրս կան նաև պատմական, հնագիտական ու լեզվագիտական դիտողություններ։

Գրքի 5-րդ էջում Կ. Հովհաննիսյանը հիշատակում է էրեբունիի հիմնադրման մասին խոսող արձանագրությունը և ապա գրում. «Արգիշտին հրամայեց համանման մի արձանագրություն էլ քարի վրա փորագրել պետության մայրաքաղաք Տուշպայում, ինչպես նաև նույն բնագիրը դրվագել բրոնզե արձանիկի պատվանդանին»։

---

5 Կ. Հովհաննիսյան, էրեբունի..., 1968, էջ 34։

6 Նույն տեղում, էջ 36, 46։

7 Նույն տեղում, էջ 47—48։

8 Նույն տեղում, էջ 44։

9 Մ. Ա. Իսրայելյան, Ուրարտական մի հուշարձան Երզնկայի մոտ. «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 311—316, նաև նկար 4։

10 Կ. Լ. Հովհաննիսյան, էրեբունի..., 1968, էջ 41։ Ի դեպ՝ թե ինչո՞ւ սուսին (և այլ շինարարական տերմիններ) Կ. Հովհաննիսյանը հատուկ անուն է համարում և գրում է գլխատառով, մեզ համար անհասկանալի է։

Անշուշտ, խոսքը վերաբերում է երկտող սեպագիր արձանագրությամբ բրոնզե զողտրիկ պատվանդանին, որի վրայի արձանիկը, համաձայն քննարկվող գրքի 30-րդ էջի, եղել է փայտից և ո՛չ թե բրոնզից (կամ այլ նյութից)։ Այնուհետև, բոլորովին էլ ճիշտ չէ, այն էլ այդքան վճռական տոնով հայտարարել թե՝ «...նույն յնագիրն է դրվագել... պատվանդանին», վերջինը իր երկու տող արձանագրությամբ հիշատակում է քաղաքի խորհրդանիշը, որ պատրաստվել է «երբ քաղաքը հիմնադրվել էր», և ո՛չ թե նախորդի նման հաղորդում է քաղաքի հիմնադրումը «ի փառս (՞) Բիայնա երկրների, ի սարսափ (՞) թշնամի երկրների»։

Այդ խորհրդանիշը Կ. Հովհաննիսյանը համարում է Կարմիր-բլուրում հայտնաբերված փայտե որս արձանիկներից մեկը, առանց հիմնավորելու մնացած երեք նույնանման արձանիկների առկայությունը, ինչպես և անտեսելով հենց պատվանդանի վրայի արձանագրության բովանդակությունն ու ժամանակի կրոնա-պաշտամունքային գաղափարախոսությունը[11]։

Հաջորդ՝ 6-րդ էջում հայտարարված է, թե ուրարտական սեպագրերի «Բ» հնչյունը հայերենում ամենուրեք համապատասխանում է «Վ»-ին[12]։ Սա նույնպես ճիշտ չէ և ստեղծում է այն տպավորությունը, թե Էրեբունի—Երևան փոխանցումը մի բոլորովին պարզ հարց է, մինչդեռ «ամենուրեք» չէ, որ ուրարտերեն «Բ»-ն հայերենում «Վ» է տալիս, այսպես, օրինակ, ուրարտերեն աբիլիանիխի ցեղանվան «Բ»-ն նույնությամբ պահպանված է նրա հայերեն «Աբեղյան[ք]» փոխանցման մեջ. այնուհետև, նշված չէ, որ ➤⋛〉 սեպախումբը վերծանվում է ն՛ պու (կամ փու), և՛ բու, որ պու-ով վերծանողներ եղել են[13], և այսօր էլ դեռ կան[14], իսկ այդ դեպքում քաղաքանունը հնչում է Իրպունի (կամ էր(է)պունի), որից Երևան ոչ մի դեպքում չի ստացվի։

Ճիշտ չէ նաև հետևյալ հայտարարությունը. Արգիշթին մի շարք արշավանքներ է կատարել, որոնք իբր «...թվականներով հիշատակված են տարեգրության մեջ»[15]։ Նման որևէ թվական տվյալ չկա սեպագրերում, և ուրարտագետները բազմաթիվ նյութերի համադրության միջոցով միայն կարողանում են մոտավորապես որոշել այս կամ այն թագավորի գահակալության տարիները։

Ուրարտերեն միևնույն բառը (napalhaidi) Կ. Հովհաննիսյանը նշել է մի դեպքում «խաղաղեցման համար» թարգմանությամբ, մի այլ դեպքում՝ «ի սարսափ»[16], կամ էգալը (É. GAL), նրա կարծիքով, ուրարտերեն բառ է (էջ 36), մինչդեռ ուրարտերենում այն գաղափարագիր է, որի ուրարտերեն համարժեքը, ցավոք, մեզ հայտնի չէ։

Գրքում կան նաև լեզվա-ոճական անհարթություններ[17], հատուկ անունների գրության շփոթ[18], ծանոթագրությունների ակնհայտ անճշտություններ[19], ինչպես և ոչ հստակ մտքեր. այսպես, օրինակ, պարզ չէ, թե հեղինակը ինչ է ուզում ասել, երբ գրում է՝ «...բնիկ ուրարտացին...» արմատապես հեղաբեկում են «...տեղական ցեղերի պատմական ճակատագիրը» (էջ 7, 10. ընդգծումը մերն է.— Մ. ԻՍՐ.)։ Կամ՝ «Արգիշտիխինիլիին վիճակված էր ապագայում կարևոր դեր խաղալ ուրարտական վիմագրության ստեղծման գործում» (էջ 28) և այլն։ Կան և չհիմնավորված մրա

---

[11] Կ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Էրեբունի..., 1968, էջ 30։ Իբր քաղաքի խորհրդանիշը պատկերվել է շարքային զինվորականի կերպարանքով։

[12] Նույն տեղում, էջ 6։

[13] К. Л. О г а н е с я н, Арин-берд (Ганли-тапа. урартская крепость города Ирпуни. Изв АН Арм. ССР, № 8, 1951, էջ 76։ Б. Б. П и о т р о в с к и й, Кармир-блур, 11, 1952, էջ 10, 52։ И. М. Л о с е в а, Раскопки урартской крепости города Ирпуни (Ерепуни) на холме Арин-берд. СВ, 1955, № 3:

[14] Г. А. М е л и к и ш в и л и, Урартские клинообразные надписи, № 138, տող 4։ M i r j o S a l v i n i. Nairi e Ur(u)atri, 1967, էջ 51։ Եվ այլն։

[15] Նույն տեղում, էջ 27։

[16] Նույն տեղում, էջ 28. թարգմանողները տարբեր հեղինակներ են, որոնք չեն նշված։

[17] Նույն տեղում, էջեր՝ 8, 11, 12, 18, 28 և այլն։

[18] Նույն տեղում, էջեր՝ 5, 14, 15, 10, 17, 25, 27, 36 և այլն։

[19] Օրինակ՝ ծանոթագրություններում խոսում է Ս. Սահակ (Վանի) եկեղեցում հայտնաբերված կոթողի մասին և վկայակոչում է Ն. Հարությունյանին (որը այդ մասին որևէ ակնարկ չունի՝ նշված աշխատության մեջ), փոխանակ Գ. Ա. Մելիքիշվիլուն կամ Կ. Լեման-Հաուպտին նշելու (էջ 27. ծնթ. 3)։ Էջ 25-ում (ծնթ. 2) կամ էջ 39-ում (ծնթ. 2) փոխանակ սկզբնաղբյուրը նշելու (АВИУ, 38, կամ՝ 49—367), հիշատակում է Բ. Բ. Պիոտրովսկուն։ Էջ 12-ում (ծնթ. 8) գրում է՝ «...վերջերս Կարմիր-բլուրում հայտնաբերված նոր վիմագրական նյութերի վերծանությունից» և ծանոթագրում է... Վ. Ս. Գոլենիշչևին և այլն, և այլն։

քեր. Համաձայնելով Հ. Մարտիրոսյանի հետ, Արգիշթիխինիլին համարում է վարչա-տնտեսական և կրոնական կենտրոն (էջ 27, ծնթ. 5), բայց հաջորդ էջում նշում է, թե՝ Արգիշթիխինիլին «...ունեցել է երկու միջնաբերդ». ուրեմն, կարելի է ենթադրել, որ Արգիշթիխինիլին եղել է նաև ռազմական կենտրոն. այդ մասին լռում է Կ. Հովհաննիսյանը[20]։

Կ. Հովհաննիսյանը Էրեբունիի անկումը վերագրում է մ. թ. ա. 585 թ., մարերին և ոչ թե սկյութներին, որը հիմնավորում է նույն փաստերով, ինչպես սկյութների կապակցությամբ, այն է՝ որոշ իրերի փոխադրումով Էրեբունիից Թեյշեբաինի. պարզ չէ, ուրեմն, հակառակ իր նախկին կարծիքի, Էրեբունին և Թեյշեբաինին կործանվել են միաժամանա՞կ, սկյութների թե՞ մարերի գրոհներով[21]։ Պարզ չէ նաև, թե ինչպես մարերի գրոհներով կործանված ուրարտական պետությանը անմիջապես փոխարինում է հայն ու Հայաստանը (էջ 21)։ Ինչ վերաբերում է Էրեբունիի անընդմեջ պատմությանը (էջ 23), անհրաժեշտ էր նշել այդ հարցը արծարծող նախորդող հեղինակներին[22]։

Պետք էր նաև ծանոթագրել մի շարք այլ հեղինակների. այսպես, օրինակ, Դ. Ա. Ղափանցյանին, Արարատյան հարթավայրը ուրարտացոց 2-րդ կենտրոն համարելու առթիվ (էջ 12), Գ. Ա. Տիրացյանին, Էրեբունին աքեմենյան սատրապության կենտրոն մատնանշելու առթիվ (էջ 22, 60—61), նաև՝ ուրարտական մշակույթի ազդեցությունների հարցի առթիվ (էջ 15, 23 և այլն). Գ. Ա. Մելիքիշվիլուն, ուրարտական կրոնական կենտրոնների մասին խոսելիս (էջ 51)։ Սեպագիր բնադրերը մեջբերելիս չի հիշատակում դրեթե ոչ մի հեղինակի (չէ՞ որ ինքը վերծանող չէ), այդ թվում և Բ. Բ. Պիոտրովսկուն (էջ 30 և այլուր)։

Անհրաժեշտ էր նաև, որ Կ. Լ. Հովհաննիսյանը այս հոբելյանական հրատարակության մեջ ավելի մանրամասն խոսեր պեղումները կատարող արշավախմբի աշխատանքների մասին. չէ՞ որ հնագիտական պեղումը, մանավանդ Արին-բերդում, մի մարդու գործ չէր ոչ միայն սև աշխատանքի բնագավառում, այլև, մանավանդ, մասնագիտական առումով։

Գրախոսվող գրքույկը իր թերություններով հանդերձ օգտակար է լայն ընթերցողի համար հատկապես իր վավերագրական նկարներով։

Մ. Ա. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

---

20 Արգիշթիխինիլիի առթիվ տե՛ս նաև մեր թեկնածուական դիսերտացիայի ավտոռեֆերատը «Պատմական Արմավիրը ըստ ուրարտական արձանագրությունների», 1949 թ., էջ 7, 14։

21 Համեմատի՛ր՝ К. Л. Оганесян, Архитектура Эребуни, 1961, էջ 7, 13 և «Էրեբունի», 1968, էջ 21։

22 И. М. Лосева, Раскопки цитадели урартского города Ирпуни, КСИИМК, 1955, պրակ 58, էջ 50։ Գ. Ա. Տիրացյան, նշված աշխատությունները։ Մ. Ա. Իսրայելյան.— 1) Կարմիր-բլուրի նորագյուտ արձանագրությունները. Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ, 1947, № 2, էջ 222. 2) Արին-բերդի susi- տաճարը..., «Տեղեկագիր», 1957, № 9, էջ 103—104։ Եվ այլուր։